ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԻԳԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԵՎ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Վիգեն Ավետիսյանի դիմումի հիման վրա՝ «Տեսչական մարմինների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ նախադասության և «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. 2024 թվականի նոյեմբերի 13-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Վիգեն Ավետիսյանի (այսուհետ՝ Դիմող, ներկայացուցիչ՝ փաստաբան Արթուր Հովհաննիսյան) դիմումը, որով Դիմողը խնդրել է.

«(…)

2. «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ նախադասությունը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասին, 31-րդ հոդվածին, 49-րդ հոդվածին, 57-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասությանը, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 78-րդ հոդվածին և 79-րդ հոդվածին հակասող և անվավեր»:

2. Ներկայացնելով թիվ ՎԴ/4151/05/20 վարչական գործի դատավարական նախապատմությունը՝ Դիմողը նշում է, որ «Տեսչական մարմինների մասին» օրենքի

8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ նախադասությունն այն մեկնաբանությամբ, որով թույլ է տրվում առանց որևէ հիմքի և պատճառաբանության կամայականորեն ազատել վարչական պաշտոն զբաղեցնող՝ տեսչական մարմնի ղեկավարին՝ նշվածը մեկնաբանելով որպես հայեցողական լիազորություն, խախտում է Սահմանադրության 57-րդ հոդվածի 2-րդ մասը, քանի որ վերոգրյալ լիազորության նման մեկնաբանման համատեքստում անձի՝ աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում պաշտպանության իրավունքը դառնում է իրավական ֆիկցիա, մասնավորապես, թեև անձը կարողանում է դիմել դատարան՝ ձևական առումով քննության առարկա դարձնելով իր իրավունքի խախտումը, այնուամենայնիվ, փաստացի չի կարողանում արդյունավետ պաշտպանել իր խախտված իրավունքը (իրավունքները), քանի որ եզրափակիչ դատական ակտն ի սկզբանե կանխորոշված է՝ պայմանավորված վիճարկվող դրույթին տրված համապատասխան մեկնաբանությամբ: Հավելելով՝ Դիմողը պնդում է, որ վերոգրյալը բացառում է գործի ըստ էության քննությունը և հանգեցնում է վիճարկվող՝ «Տեսչական մարմինների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ նախադասության՝ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին հակասությանը:

Ըստ Դիմողի՝ մի կողմից՝ Սահմանադրությունը յուրաքանչյուր անձի տվել է ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու հնարավորություն, այդ թվում՝ հանրային պաշտոնում պաշտոնավարելու իրավունք, որը ներառում է հանրային ծառայությունից կամայականորեն չազատվելու իրավունքը, մյուս կողմից՝ «Տեսչական մարմինների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ նախադասությունը և (կամ) դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացը հանգեցնում են հանրային ծառայության անցնելու իրավունքի ձևախեղման՝ հանրային ծառայողի՝ առանց որևէ հիմնավորման աշխատանքից ազատվելու պայմաններում: Արդյունքում՝ Դիմողի պնդմամբ՝ իր նկատմամբ կիրառված՝ «Տեսչական մարմինների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ նախադասությունը հակասում է Սահմանադրության 49-րդ հոդվածին, քանի որ այն թույլատրում է առանց որևէ պատճառի, նույնիսկ խտրականորեն, և առանց հիմքերն ու պատճառները բացահայտելու անձին ազատել իր զբաղեցրած վարչական պաշտոնից:

Դիմողը նշում է, որ ողջամտորեն ենթադրելի է, որ դիմումում վկայակոչված դեպքերում անձի՝ պաշտոնից ազատման հիմքերն այնպիսին են, որ կարող են կասկածի տակ դնել վերջինիս անձնական և մասնագիտական հատկանիշները, «այդ իսկ պատճառով էլ չեն նշվել՝ դրանք պարտակելու նպատակով, որի պայմաններում անուղղակիորեն, բայց միաժամանակ ակնհայտորեն ոտնահարվում է տվյալ անձի՝ մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը»:

Դիմողը պնդում է, որ «Տեսչական մարմինների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ նախադասությունը տեսչական մարմնի ղեկավարին պաշտոնից ազատելու բացարձակ և առանց սահմանափակումների լիազորությունը (ի կատար ածելու իմաստով) դարձնում է անկանխատեսելի, քանի որ առկա չեն նման լիազորության իրացման համար հիմքեր, հիմքերի առկայության անհրաժեշտություն, նման լիազորության իրացման պատճառաբանման անհրաժեշտություն, որով պայմանավորված՝ տվյալ լիազորությունն օրենքի ուժով դարձել է բացարձակ անսահմանափակ, կամայական ու անորոշ, որն էլ ինքնին հանգեցնում է նման լիազորության իրացման իրավաչափության գնահատման անհնարինության:

Արդյունքում՝ Դիմողը եզրահանգում է, որ «Տեսչական մարմինների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ նախադասությունը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը հակասում են Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասին, 31 և 49-րդ հոդվածներին, 57-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասությանը, 61-րդ հոդվածի 1-ին մասին, ինչպես նաև 78 և 79-րդ հոդվածներին:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքներից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) 29 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը **ենթակա է մերժման՝** ներքոնշյալ հիմքով և պատճառաբանությամբ.

Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ*

մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում նույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված ***այլ դեպքերում:***

Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *անհատական դիմումով գործի քննությունը կարող է մերժվել նաև այն դեպքում, երբ* ***անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:***

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը,* ***ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:***

Սահմանադրական վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որտեղ սահմանվում են այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով կարող է անհատական դիմում ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

գ) երբ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ***ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:***

Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է,* ***և հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի հակասությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում***

ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ *հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

Սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրված է. «(…) անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, երբ, թեև դրանում բարձրացված հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը, այնուամենայնիվ, դիմումում չեն բերվում բավարար իրավական փաստարկներ այն հիմնավորելու համար»:

Սահմանադրական դատարանը վերը նշված աշխատակարգային որոշմամբ նաև արձանագրել է. «(…) դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Նշված պահանջին համապատասխան՝ դիմողը պետք է նաև դիմումում առաջադրված հարցի հիմքում ներկայացնի իրավաբանորեն փաստված հանգամանքներ և նյութեր (…)»:

Այս առումով հարկ է փաստել, որ Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումների հիմնավորված լինելու պահանջը, համաձայն որի՝ դիմողը պետք է հիմնավորի, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքն է խախտվել, և ի՞նչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքի խախտման միջև, **չի կարող պահպանված համարվել բոլոր այն դեպքերում, երբ դիմողը պարզապես հղում է կատարում Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի և/կամ ազատության՝ առանց ներկայացնելու բավարար հիմնավորումներ վիճարկվող օրինադրույթի և իր համապատասխան հիմնական իրավունքի և/կամ ազատության ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապի առկայության վերաբերյալ:**

Սահմանադրական դատարանը 2022 թվականի հուլիսի 12-ի ՍԴԱՈ-126 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է, որ «(…) *անձը պետք է անհատական դիմումի շրջանակներում ուղղակիորեն մատնանշի և հիմնավորի վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կոնկրետ դրույթի և Սահմանադրության 2-րդ գլխում բովանդակվող իր*

հիմնական իրավունքի և/կամ ազատության ենթադրյալ հակասության ***անմիջական*** *պատճառահետևանքային կապը:* Այլ կերպ ասած՝ **վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականությունը պետք է ուղղակիորեն հանգեցնի Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված որևէ հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման/սահմանափակման:** Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում շեշտադրել, որ **Սահմանադրության 2-րդ գլխում բովանդակվող սահմանադրաիրավական սկզբունքներին վիճարկվող իրավանորմերի հակասությունը սահմանադրաիրավական իմաստով չի կարող անհատական գանգատարկման առարկա դառնալ, եթե վերջնարդյունքում չի հանգեցնում անձի՝ Սահմանադրության 2-րդ գլխով նախատեսված հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման/սահմանափակման»:**

Վերը ներկայացված դրույթներով ամրագրված կարգավորումները, Սահմանադրական դատարանի վերոնշյալ իրավական դիրքորոշումները համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Սահմանադրական դատարանը հանգում է հետևյալ եզրակացության.

անհատական դիմումի շրջանակում նորմատիվ իրավական ակտի դրույթի/դրույթների (սույն պարագայում նաև իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության, դրանցում առկա ենթադրյալ օրենսդրական բացի) սահմանադրականությունը վիճարկելու պարագայում **անհրաժեշտ է բավարար հիմնավորումներ ներկայացնել առ այն, որ վիճարկվող դրույթը/դրույթները (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունը, դրանցում առկա ենթադրյալ օրենսդրական բացը) հանգեցրել է/են Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման, որը սույն պարագայում տեղի չի ունեցել:**

Մասնավորապես՝ Դիմողը սույն անհատական դիմումի շրջանակում վիճարկում է «Տեսչական մարմինների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ նախադասության և «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության, դրանցում առկա ենթադրյալ օրենսդրական բացի) համապատասխանությունը Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասին, 31 և 49-րդ հոդվածներին, 57-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին

նախադասությանը, 61-րդ հոդվածի 1-ին մասին, ինչպես նաև 78 և 79-րդ հոդվածներին, ինչի կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է.

սույն անհատական դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ թիվ ՎԴ/4151/05/20 վարչական գործի շրջանակներում Դիմողը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ վարչապետի՝ **Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի** պաշտոնից ազատելու մասին ՀՀ վարչապետի 2020 թվականի հունիսի 10-ի թիվ 682-Ա որոշումն անվավեր ճանաչելու, նախկին պաշտոնին վերականգնելու և հարկադիր պարապուրդի գումարը բռնագանձելու պահանջների մասին:

Այս առումով հարկ է փաստել, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված է, որ ***պետական վարչական պաշտոններն են*** *Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի, նրա տեղակալների, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի, նրա տեղակալների, վարչապետի աշխատակազմի ղեկավարի, նրա տեղակալների, Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի,* ***Կառավարությանը****, վարչապետին և նախարարություններին* ***ենթակա մարմինների ղեկավարների*** *և նրանց տեղակալների, վարչապետի աշխատակազմի գրասենյակի ղեկավարի, մարզպետների և նրանց տեղակալների, դատական դեպարտամենտի ղեկավարի, Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի, գլխավոր ռազմական տեսուչի և նրա տեղակալի պաշտոնները:*

«Տեսչական մարմինների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությամբ սահմանված է, որ ***տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնը վարչական պաշտոն է:***

Քննարկվող համատեքստում Սահմանադրական դատարանը կարևոր է համարում վկայակոչել Սահմանադրական դատարանի 2024 թվականի փետրվարի 27-ի ՍԴՈ-1716 որոշումը, որով Սահմանադրական դատարանը, անդրադառնալով պետական վարչական պաշտոնի էությանը և առանձնահատկություններին, արձանագրել է հետևյալը.

«(...) հանրային պաշտոնների զբաղեցման համար օրենսդիրը սահմանել է այլ բնութագրիչներ (Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մաս). հանրային պաշտոններն ընտրովի

կամ նշանակովի պաշտոններ են, որոնք զբաղեցվում են ***1) քաղաքական գործընթացների, 2) հայեցողական որոշումների, 3) ինչպես նաև օրենքով նախատեսված այլ ընթացակարգերի արդյունքով:*** *Այս տեսակի պաշտոններն իրենց հերթին դասակարգվում են պետական և համայնքային հանրային պաշտոնների, որոնցից յուրաքանչյուրը ենթադասակարգվում է քաղաքական,* ***վարչական*** *և հայեցողական պաշտոնների, իսկ պետական հանրային պաշտոնների դեպքում՝ նաև ինքնավար պաշտոնների:*

Հանրային պաշտոնների նշյալ դասակարգումից հետևում է դրանց ***համալրման և պաշտոնից ազատման առանձնահատուկ կարգը:*** *Մասնավորապես, ի տարբերություն հանրային ծառայության պաշտոնների (պետական կամ համայնքային),* ***հանրային պաշտոններին նշանակումները և պաշտոններից ազատումները պայմանավորված են քաղաքական գործընթացներով կամ նշանակման և ազատման լիազորությամբ օժտված պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հայեցողությամբ:***

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի՝ հանրային պաշտոնները «զբաղեցվում են քաղաքական գործընթացների, հայեցողական որոշումների, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ ընթացակարգերի արդյունքով» օրենսդրական ձևակերպումն ուղղակիորեն վերաբերում է տվյալ պաշտոնը զբաղեցնելուն: Այսինքն՝ ***առհասարակ պաշտոնավարումը և հետևաբար՝ պաշտոնին նշանակման և պաշտոնավարման դադարեցման հիմքը օրենսդիրը պայմանավորում է քաղաքական գործընթացներով, հայեցողական որոշումներով, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ ընթացակարգերով:***

Այսպիսով, Սահմանադրական դատարանը փաստում է, որ ***հանրային պաշտոններ զբաղեցնելու վերաբերյալ որոշումը, որն ուղղակիորեն նշանակում է ոչ միայն այդ պաշտոնում նշանակումը, այլ նաև տվյալ պաշտոնում պաշտոնավարման դադարեցումը, ամբողջովին վերապահված է տվյալ պաշտոնում նշանակելու կամ պաշտոնից ազատելու իրավասությամբ օժտված պետական կամ համայնքային մարմնի կամ պաշտոնատար անձի հայեցողությանը,*** *որի շրջանակը սահմանվում է Օրենքով կամ համապատասխան ոլորտային օրենսդրությանը վերաբերող այլ օրենսդրական ակտերով:*

(...) ***Օրենքով պետական վարչական պաշտոն զբաղեցնելու հարցը դասելով հայեցողական որոշմամբ լուծվող հարցերի շրջանակին՝ օրենսդիրը նախատեսել է միայն նման որոշում կայացնելու լիազորությամբ օժտված մարմինների կամ պաշտոնատար անձանց շրջանակը՝ առանց սահմանափակելու նույն հարցի առնչությամբ նրանց վերապահված հայեցողությունը»***:

Սահմանադրական դատարանը վերը նշված որոշմամբ արտահայտել է նաև դիրքորոշումներ առ այն, որ *«(...)* ***վարչական պաշտոն զբաղեցնող անձը չի կարող օգտվել իր պաշտոնավարման կայունության այնպիսի երաշխիքից, որի գործադրումը կհակասի իր պաշտոնին նշանակելու և պաշտոնից ազատելու իրավասություն ունեցող պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հայեցողությանը:***

(...)

(...) օրենքով չնախատեսված հիմքով հանրային ծառայությունից ազատելու արգելքին վերաբերող կանոնը պահպանված է, երբ ***օրենսդիրը որպես պաշտոնից ազատման հիմք առանձնահատուկ իրավիճակում դիտարկում է իրավասու մարմնի հայեցողությունը»:***

Վերոշարադրյալից բխում է, որ օրենսդիրը սահմանել է հանրային պաշտոնին, այդ թվում՝ պետական վարչական պաշտոնին նշանակման և այդպիսի պաշտոնից ազատման առանձնահատուկ կարգ: Մասնավորապես՝ պետական վարչական պաշտոնին նշանակումը և այդպիսի պաշտոնից ազատումը պայմանավորվել են քաղաքական գործընթացներով կամ նշանակման և ազատման լիազորությամբ օժտված պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հայեցողությամբ: Ընդ որում՝ օրենսդիրը պետական վարչական պաշտոն զբաղեցնելու հարցը դասել է հայեցողական որոշմամբ լուծվող հարցերի շրջանակին և սահմանել է նման որոշում կայացնելու լիազորությամբ օժտված մարմինների կամ պաշտոնատար անձանց շրջանակը՝ չսահմանափակելով տվյալ հարցի առնչությամբ նրանց վերապահված հայեցողությունը:

Սույն համատեքստում Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև արձանագրել, որ թիվ ՎԴ/4151/05/20 վարչական գործի շրջանակներում Վճռաբեկ դատարանն իր՝ 2024 թվականի հունիսի 21-ի որոշմամբ ևս վկայակոչել և համապատասխան եզրահանգման հիմքում դրել է Սահմանադրական դատարանի վերը

նշված՝ 2024 թվականի փետրվարի 27-ի ՍԴՈ-1716 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները:

Ողջ վերոգրյալի հաշվառմամբ՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Դիմողը վկայակոչել է վիճարկվող դրույթների (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության, դրանցում առկա ենթադրյալ օրենսդրական բացի) հակասությունը Սահմանադրության 31, 49 և 61-րդ հոդվածներով, ինչպես նաև 57-րդ հոդվածի 2-րդ մասով երաշխավորված՝ համապատասխանաբար մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության, հանրային ծառայության անցնելու, արդյունավետ դատական պաշտպանության և աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում պաշտպանության հիմնական իրավունքներին, սակայն **բավարար հիմնավորումներ չի ներկայացրել իր՝ նշված հոդվածներով երաշխավորված որևէ հիմնական իրավունքի խախտման փաստի, հետևաբար՝ վիճարկվող դրույթների (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության, դրանցում առկա ենթադրյալ օրենսդրական բացի) և համապատասխան հիմնական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապի անմիջական առկայության վերաբերյալ:**

Անդրադառնալով Դիմողի կողմից վկայակոչված՝ Սահմանադրության 78 և 79-րդ հոդվածներին՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանց բովանդակությունից բխում է, որ **կոնկրետ վերահսկողության պարագայում դրանք ինքնին չեն կարող դառնալ առանձին քննարկման առարկա, այլ կարող են դիտարկվել միայն որևէ հիմնական իրավունքի և/կամ ազատության սահմանափակման լույսի ներքո:**

Դիմողի կողմից վկայակոչված՝ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այն ամրագրված է Սահմանադրության *«Սահմանադրական կարգի հիմունքները»* վերտառությամբ 1-ին գլխում: **Մինչդեռ, կոնկրետ վերահսկողության պարագայում նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը վիճարկելու պարագայում անհրաժեշտ է հիմնավորել, որ վիճարկվող դրույթը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման:**

Այսպիսով, Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ սույն դիմումով չի հիմնավորվում «Տեսչական մարմինների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի

3-րդ նախադասության և «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության, դրանցում առկա ենթադրյալ օրենսդրական բացի) հակասությունը Սահմանադրության 31-րդ, 49-րդ, 61-րդ հոդվածներով և 57-րդ հոդվածի 2-րդ մասով երաշխավորված հիմնական իրավունքներին, հետևաբար և Սահմանադրության 78 և 79-րդ հոդվածներին:

Ուստի՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը ենթակա է մերժման՝ Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 69-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա՝ **դիմումն ակնհայտ անհիմն լինելու հիմքով:**

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 1-ին, 2 և 5-րդ մասերով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

«Վիգեն Ավետիսյանի դիմումի հիման վրա՝ «Տեսչական մարմինների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ նախադասության և «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

17 դեկտեմբերի 2024 թվականի
ՍԴԱՈ-193